



ԱԶԱՏ ԽՕՄՔ

ՇԱԲԱԹ 10 ՆՈՅԵՄ. 1906. ԱԼԵԲՍԱՆԴՐԻԱ

ՂՈՒՐ, ՀԵՐՔՈՒՄ, ՀԱՐՍԱՆԻՔ, ՍՈՒՏ, ԿՍՏԱԿ, ԵՒՆ

Կը լսենք թէ հայկական նուազախումբը որ վերջէրս, հոգեվարք վիճակի մէջ, գրեթէ մահկանացուն կնքելու վրայ էր, Խաչօ Խաչիկեանի և ուրիշ մէկ քանի եռանդուն և բարեացակամ երիտաւարդներու անձնուէր ջանքերուն շնորհիւ կրկին վերակենդանանալու յոյսեր կուտայ:

Նուազի գործիքները որոնք մէկ քանի Խաւաքիներու քով մնացած էին, կարելի եղած է ետ առնել, բաց աստի նուազածունները, կամաց կամաց, իրարու մօտեցած են, խումբը վերականգնելու ազնիւ մտադրութեամբ:

Մենք ուրախութեամբ լսեցինք ու տեսանք այս եղածները և վստահ ենք որ շատեր մեզի հետ պիտի ուրախանան հայկական նուազախումբի վերածնունդէն:

Եւ սակայն կարծենք միմիայն ուրախութիւնը բաւական չէ և ամենուս պարտականու-

Թիւնն է քիչ մէն ալ նիւթակուն ու բարոյական
օժանդակութեամբ օղնել այն երիտասարդնե-
րուն որոնք այսպիսի զեղեցիկ ձեռնարկ մը յա-
ջողցնելու համար մէջտեղ ելած են:

Այսօր այսչափ:

Անցեալ շարթու «Ազատ Խօսք»ի մէջ հան-
գուցեալ ա. Բարսեղ Իսփէնճեանի հոգեհանգիս-
տին յիշատակութիւնը ըրած տաննիս գիտո-
ղութիւն ըրած էինք արարողութեան միջոցին
պնակ պատցուելուն գէմ «Փողօվուրդ» ստորագ-
րութեամբ մեզ ուղղուած գրութիւն մը գիտել
կուտայ թէ՛ այդ պնակներէն մին երգեցիկ տը-
ղոց համար էր, որոնք թիւով քառասուն, նոյն
օրուան պաշտամունքին մասնակցեցան և հան-
գուցելոյն պարագայից կտրմէ եղած նուիրատու-
ութենէն բաժին չունեցան: Ուստի «Փողօվուրդ»
ցաւ կը յայտնէ մեր գրածին համար և կ'ըսէ
թէ ինք «սիրայօժար իր աննշան լումաները կը
ձգէ ձայնաւոր տղոց պնակին համար:

Պ. յօգուածագիրը ուշագրութիւն չէ ըրած
մեր գրածին: Մենք մեր գիտողութիւնը ուղղած
էինք քահանաներուն և վարդապետներուն որոնց
կը պատկանի, կարծենք, Եկեղեցիի ներքին կարգ
ու սարքի հսկողութիւնը:

Երգեցիկ տղոյ պնակին մօնք ալ սիրայօժար

կօտանք մեր լուսան միայն թէ այդ պնակէն
վերջը կամ առաջ ուրիշ անընդհատ պնակներ ալ
չըլած չըլլան:

Անցած կիրակի իրիկուն տեղի ունեցաւ տ.
Երուանդ Պոյաճեանի ամուսնութիւնը օր. Զա-
լուհի Էմիրզեանի հետ:

Տ. Պոյաճեան ինքնօգնութեամբ իր աւագու-
րէզը շինած երիտասարդ մըն է որ պարկեշտու-
թեամբ ու ազգասիրական զգացումներովը ամե-
նուն յարգանքին արժանացած է:

Պսակի աշարողութիւնը մեծ փայլով կա-
տարուած է տ. Պոյաճեանի բնակարանը, ինեւր-
կայութեան հայ և օտարազգի բազմաթիւ բա-
րեկամներու:

Պսակէն յետոյ պատուելի Սարգիս Գարա-
կիւղէլեան իրեն յատուկ պիւճախօտութեամբ,
պարագային յարմար և իմաստալից բանախօ-
տութիւն մը բրաւ:

Յետոյ Հ. Յ. Գաշնակցութեան օրիորդաց
Շաքէ խմբին կողմէ քառաձայն երգեր երգուե-
ցան, որոնք մեծ հաճոյք պատճառեցին հարսնե-
ւորներուն: Ներկաներու առաջարկութեան վրայ
ինպատ խմբին հանգանակութիւն մը կատար-
ուելով 215 ու կէս զրշ. ողջ գումար մը գոյացաւ:

Խմբագրութիւնս իր անկեղծ շնորհաւորու-
թիւնները կը յայտնէ նորապսակ ամուլին:

Եթէ կան լուծիւններ որոնք ոսկի են, ապահովաբար անոնցմէ չէ «Յառաջգիմասէր» քննելու օրկան Լուսաբերի լուծիւնը:

Այդ լուծիւնը ո՛չ թէ ոսկի, ոչ անագանգամ չէ: Ատիկա ամօթահար լուծիւնն է խայտառակուած զրգարտիչի մը:

Լուսաբեր յայտարարած էր թէ ինք կրնայ մէկէ աւելի անձնաւորութիւններ վկայութեան բերել որոնք ժամանակին ականատես եղած են Բ. Շահպաղի յոյն երիտասարդի մը գլուխ պառուելուն: Նոյնպէս յայտարարած էր թէ՛ մի քանի տասնեակ պատուաւոր ազգայիններ գիտէ որոնք Շահպաղին վերոյիշեալ յանցանքով ձերբակալուած ըլլալը կրնան հաստատել:

Արդ, մենք ալ մեր կողմէ յայտարարեցինք թէ Լուսաբերի այդ ըսածները բացարձակ սուտ զրգարտութիւններ են, վատ ու ստոր վրէժ-լնդրութենէ մը բխած:

Վահան Բլբլբեանի հովանաւորութեան տակ չարագործող Յառաջգիմասէր Միւլթիւնը եթէ արժանապատուութեան շոշորթ մը կրէր իր վրայ հարկ էր որ իր վրայ ծանրացող զրգարտական մատնութեան արտաք գոնէ մասամբ սրբել փորձելու համար մեզ ցոյց տար այն մէկէ աւելի անձնաւորութիւնները և մի քանի տասնեակ պատուաւոր ազգայինները որոնք Բարսեղ Շահպաղի յոյն երիտասարդի մը գլուխը պառուելուն

տկանատես սգած էին և անոր այդ յանցանքով
ձերբակալուած ըլլալը կը հաստատեն:

Բայց Վահան Քիւրքճեանի հովանաւորու-
թեան տակ կ'սղմուած «Յառաջգիմասէր Միու-
թիւն» անուն կամ անանուն խմբակը արդէն առջի
օրէն ինքզինք այնքա՞ն վարկաբեկ ըրաւ որ զար-
մանք չենք զգար իր այս նորագոյն վասութեան
հանդէպ:

Լոտթիւնը ոսկի է, այնպէս չէ՞, ո՞վ լու-
սարեր:

Իսկ զրպարտել կամ մասնե՞լը . . . :

- Այն ուլ սաճկականն ոսկի:

Նախորդ թիւով ծանուցած էինք թէ վեմ-
Պօղոս փաշա Նուպար «Այս երեքշաբթի Ալեք-
սանդրիա կը հասնի»: Տպարանական սխալմունք
պարզապէս, փոխանակ «Գալ երեքշաբթի» ի. ո-
րովհետև Նորին Վսեմութիւնը հոս կը ժամանէ
ամսուս Նին երեքշաբթի օրը:

Մեր պարանական սխալը տեղի տուած է
առաջնորդական սխալի մ., քանզի արժ. Աղաւ-
նունի վարդապետ Թղաթ Խօսքի գրածին վրայ
երեքշաբթի առտու կանուխ պատրաստուէր է
նաւամատոյց երթալ Նորին վսեմութիւնը դիմա-
ւորելու համար, երբ վերջին պահուն հասկցուեր
է թէ փաշան նոյն օրը չպիտի գայ

Արժ, Մկրտիչ վարդապետ Ագուռունիի ներողամտութեան կ'ապաւինինք մեր այս այս աւկամայ սխալմ. ւնքին համար և կը խնդրենք որ իր օրհնութիւնը անպակաս ընէ Ազատ Խօսքի վըրայէն:

Վերջապէս գտնուած է նախագահ մը որ յանձն առած է նախագահելու Վահան Քիւրքճեանի կազմած Յառաջդիմասէր Միութեան: Յայտնի է որ այդ Միութիւնը ամիսներէ ի վեր Գահիրէ ասդին անդին ինկած էր ծանօթ հայ անձնաւորութիւններէն մին իրեն նախագահ ընելու համար և ամէն կողմէ մերժումի հանդիպած:

Այժմ կը լսենք թէ Միութիւնը այ յուսահատած հայ նախագահ մը ունենալէ, Հասան Ալի էֆէնտի անուն թուրք մը բնորոշ է իրեն նախագահ: Հասան Ալի էֆէնտի սիրով ընդունած է իրեն առաջարկուած պաշտօնը, այն պայմանաւ սակայն որ Միութեան օրկանը իր անունը փոխէ և «Լուսաբեր տուտու»ի տեղ «Պաթմա Հանըմ» կոչուի:

Յառաջդիմասէրք հաւանած են այս արդար պահանջումին:

Հայ թերթերու ընդհանրական ներկայացուցիչ տ. Յ. Ղազիկեանի պէս քաղաքիս մէջ


չըջող մեր Երևութախանական ժողովին չափ վաւերական զրոյցէ մը կ'իմանանք թէ, որովհետեւ ո՛վ որ տկանջ ունի կ'իմանայ, ածխավաճառախօս պատուելին բացարձակապէս, սմանք կ'ըսեն անդառնալի կերպով մերժելով, մերժեր է որ և է և իցէ մնալուն կամ դնացիկ պաշտօն ստանձնել այն վարժարանին մէջ որուն Պօղոսեան անունը կուտանք այսքան տարիներէ ի վեր բոլորովին ռպարդիւն կերպով: Պատահական զրոյցը իր կողմէ կաւելցնէ թէ սոյն այդ պատուելին յայգաբըս որոյ անցեալ տարի, ամառուան եղանակին, անհաճող միջագէպ մը տեղի ունեցաւ այն կրթական յարկին տակ որ շնորհիւ նորակազմ հօգաբարձութեան որուն անդամներէն մին ծափահարելու առիթը պիտի ունենանք այս երեկոյ, կը խօստանայ տիպար հաստատութիւն մը դառնալ, պատահական զրոյցը վերջապէս շատ մը միջանկեալ, դարձուցիչ ու մուրեցուցիչ նախադասութիւններու դրիհներէն մաղապուր խուսափելով, լայն շունչ մը կ'առնէ և չարածճի ժպիտով մը, անդամ մըն ալ կը հաստատէ թէ սոյն այդ պատուելին յայտարարած է որ դպրոցական խնդրոյն մէջ «Սակս որոյ» սոյն այդ պատուելին այնքա՞ն խորին համոզմամբ պայքարեցաւ, ինք պաշտօնառութեան ո և է շիլ դիտաւորութիւն չունէր, ունեցած չէ և չպիտի ունենայ: Տարբեր բան է, միշտ շըջող զրոյցն է խօսողը, եթէ ընդ-

հանուր միջազգային քաղաքական փոփոխութիւն մը անհրաժեշտ չդարձնէ իր ներկայութիւնը Պօղոսեան վարժարանի ձեղունին ներքեւ: Այս անհաւանական պատահականութիւնը միայն պիտի կէնայ փոխել տալ այն դիրքը զոր սոյն այդ պատուելին ամուր բռնած է երկար տարիներէ ի վեր . . . մնաք բարեաւ, նորէն կը սեանուինք ըսաւ շրջող զրոյցը և մեկնեցաւ առանց վճարելու սուրճին գրամը զոր մենք ստիպուեցանք հատուցանել մեր անձնական անձուկ դանձէն:

Այսպէս ուրեմն առաջին անգամ սոյն այդ պատուելին բան մը արժեց մեզի համար:

Ի ՆՊԱՍՏ


ԿՈՎԿԱՍԻ ԱՐԿԱՇԵԼՈՑ



ԳՈՒՄԱՐ ՆԱԽՈՐԴ ՑՈՒՑԱԿԻ

Տիարք	ՉՐԸ՝ ՊՂՁ՝
	59953, 50
Տ. Պերճ Օհանեան փոխան ծաղկեպսակի հանգ. Տիկին Ս. Նիկողոսօֆի	97, 50
Տ. Պ.	97, 50
Էսաա Ապուտամահ	97, 50
Գոսարի Նիքօրախիս	97, 50

համագումար 60343, 50



ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԵԸ «ՄՆՈՒՆԴԻ ԻԺԻՑ»-Ի ԱՌԹԻՒ

Կրօնքներու գերբնական ծագումին հաւատացող-
ներէն չեմ, ո՛չ ալ Բրիտանիոյ հրաշալի մարդեղութիւ-
նը կամ անոր Աստուածութիւնը պաշտպանողներէն-
ալ ստկացն կը սիրեմ ճշմարտութիւնը, կը սիրեմ ար-
գարութիւնը ու բարութիւնը:

Կը հաւատամ բարիին, ճշմարտին, գեղեցիկին ու
վսեմին. կը հաւատամ բարոյական սկզբունքներու եւ
ուրիշներու հետ վարուելու այն կերպին՝ ինչ կերպով
որ պիտի ուզէի ուրիշները վարուէին ինձ հետ. կը հա-
ւատամ զիտական ու պատմական ճշմարտութիւններու,
կը հաւատամ վերջապէս թէ իբր մարդ շատ մը պար-
տականութիւններ ունինք կատարելիք հանգէպ անկ-
եալ մարդկութեան՝ անոնց հոգեկան բարոյական ու
մտաւորական կարողութիւնները զարգացնելու, ազնւ-
ւացնելու ու բարձրացնելու համար, և այս կարելի չէ
անշուշտ, նախատինքներով հայտնանքներով և անար-
գանքներով ի գլուխ հանել՝ այլ միայն բարութիւնով,
քաղցրութիւնով ու ազնուութիւնով:

Չեմ գիտեր թէ մեկնաբանական ո՞ր օրէնքով մարդ
կրնայ հանգիլ այն եղբակացութեան թէ Յիսուս ըն-
դունած է նախաախնքի ու հայոյանքի սկզբունքը «Մը-
նձնդք Իժիցքի բայատրութիւնը գործածելով»:

Ճշմարտութիւն մընէ թէ միևնոյն խօսքերը տար-
քեր ժամանակներու, տարբեր պարագաներու կամ հան-
գամանքներու մէջ՝ ու տարբեր անձերէ գործածուած
Ըլլալով՝ կրնան տարբեր իմաստներ ու տարբեր մեկ-
նութիւններ ունենալ՝ հետեաբար արդարութիւնը ու
ուղղամտութիւնը կը պահանջեն որ Աստուածաշունչ

Գրոց ո՛ր ե է համարին մեկնութեան համար պէտք է նկատի առնել հետեւի ստորական երեք կէտերը:

1. Թէ ո՞վ է խոսողը ե որո՞ւ ուղղած է իր խօսքերը:

2. Ե՞րբ ե ի՞նչ պարագաներու տա՛յ ըսուած են այդ խօսքերը:

3. Ըսուած խօսքերուն յարակից համարները ու պատմութիւնները ի՞նչ յարարերութիւն ունին անոնց հետ: Երբ զանց առնուին մեկնարանական օրէնքներու այս ստորական սկզբունքները՝ այն ատեն կրնան սխալիլ ու իյնալ այլանդակութիւններու մէջ նոյնիսկ ամենէն ներհուն, ամենէն զիտուն ու ամենէն ճարտար մեկնարաններն իսկ:

«Ծնունդք Իժից» խօսքերը Յիսուսինը ջեն՝ ինչպէս կը կարծեն շատեր՝ այլ Յովհաննու Մկրտչին՝ որ իբր յանդիմանութիւն գործածեծ Փարիսեցոց ու Սատուկեցոց աղանդներուն դէմ, երբ այս վերջինները խուուն ամբոխով իրեն զիմած էին Յորգանանու մէջ մկրտուելու համար (Մատթ. գ. 7):

Այդ բացատրութիւնը իբր հոմանիչ նենգամիտ, չար ու ազտոտ բարքերու ա՛յնքան սովորական ըլլալ կը թուի այն ժամանակի հրէից մէջ՝ ինչպէս հիմա մեր մէջ տիրացու, ստրուկ, պնակալէզ, եղբայրասպան եւ այլն բառերը կամ բացատրութիւնները:

Որպէս զի խնդիրը քիչ մը աւելի լուսարանուի, պէտք է զիտնալ թէ որո՞նք էին Սատուկեցիները ու Փարիսեցիները ե կամ ե՞րբ ու ինչպէ՞ս ծագում առած էին այդ աղանդները՝ որոնք Նոր կտակարանի ժամանակ կը կազմէին հրէաստանի երկու գլխաւոր կուսակցութիւնները: Եթէ կարելի է հաւատ ընծայել թալմուտի պատմութեան Սատուկեցիք իրենց ծագումը առած էին Քրիստոսէ մէկ կամ երկու դար առաջ. սա-

կայն ըստ իս աւելի ճիշդ Սատուկեցոց հիմնադիրը կոչած է Սագովի քահանայապետը՝ որ Դաւթի թագաւորութեան ժամանակ քահանայութեան պաշտօն կը վարէր Արիսթարի հետ (բ. թագ. ի. 25), ըսոյց Առդամոնի թագաւորութեան սկիզբները Արիսթար հեռացուեցաւ Սատովի (Գ. թագ. Ա. 34, 39. Բ. 35), ու հաստատեց քահանայապետական ճիւղը եւ որ աւելի մինչև Քրիստոսի ժամանակ: Ամբողջ հրէական կամ Աստուածաշնչական պատմութեան մէջ քահանայապետները Սատովի ցեղէն էին (Նզեկ. Խ. 46. ԽԳ. 19. եւ ԽՏ. 15):

Յունական ու Պարսկական իշխանութիւններու հրէաստանի վրայ տիրապետած ժամանակամիջոցին քահանայական ազնուապետականութիւնն էր որ կը կառավարէր ժողովրդեան ապագան: Կրօնական խնդիրներու մէջ Սատուկեցիք յարած էին Մովսէսի վարդապետութեան. կը մերժէին մեռելոց յարութիւնը ու հանդերձեալ կեանքի վարդապետութիւնը, կը մերժէին նաև հոգիներու և հրեշտակներու գոյութիւնը ու չէին հաւատար թէ Աստուած ո՛ր և է գործ ունի մարդոց արարքներու հետ, ասոնք զօրաւոր պաշտպաններ էին նաև կրօնքը քաղաքականութենէն ու ազգը եկեղեցիէն բաժնելու վարդապետութեան: Քրիստոսի ժամանակ Սատուկեցիք էին տիրող քահանայական կուսակցութիւնը. Անանիա ու Կայրափա՝ այս երկու քահանայապետներն ալ Սատուկեցիներ էին:

Իսկ գալով Փարիսեցոց, երբայական փարիշիմ բառը՝ որ յունարէնի տառադարձուած է փարասիօս, կը նշանակէ հերձուած կամ հատուած, հետեւաբար զիրբին է մակարերել թէ Փարիսեցիները հերձուած մըն էին: Բայց թէ ե՞րբ և ինչպէ՞ս ծագում առին, այդ մասին պատմութիւնը որոշ բան բան մը չըսէր. զի-

տենք սակայն թէ ասոնք զոյութիւն ունէին Անտիոքոս
Եփիֆանօսի թագաորութեան ժամանակ, Քրիստոսի
170 տարի առաջ և հաւանօրէն ա՛յդ ժամանակամիջոց-
ներուն, Մակարայեցոց օրով ծագում առին մասնաւո-
րապէս յունական գրականութեան ու բարբերուն ղէ՛մ
մաքառելու համար: Տօբթ. Ա. Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

(Շարունակելի)

ՄԻՔԷԻ ՍԻՐԱԿԱՇԸ

(4)

(Ե Ր Գ Ի Ծ Ա Կ Ա Ն Վ Ի Պ Ա Կ)

Բ

(Շար. 23րդ թիւէն)

Ու Սարգիս էֆէնաիի գրագիրը գրպանէն
հինգ ոսկի հանելով գրաւ անօրէնին գրասեղա-
նին վրայ:

Տնօրէնը բաւական երկար ժամանակէ ի վեր
հինգ ոսկիներու միութիւն մը չէր տեսած, ուս-
տի աչուրները փայլիլ սկսան ու պահ մը յուզ-
ուած գիտեց այդ ոսկեկոյտը որ իրեն թուեցաւ
ահագին, անհամար հարստութեան մը թանձ-
րացեալ պատկերը:

- Աղւոր բան մը հէ՞, կրկնեց գրագիրը:

- Աղւոր հիանալի՛, սքանչելի, վսե՛մ, գոչեց
անօրէնը խանգավառուած, կարծելով թէ գրա-
գիրը ոսկիներուն կ'ակնարկէ, յետոյ ինքզինքին
գալով . . . հա՛, այո, անշուշտ աղւոր մը պիտի

ըլլայ, մեր միւսին Տիրանը արդէն գէշ բան կը
գրէ՞:

Եւ Տիրանին դառնալով.

- Քեզ նայի՛մ սա պահձու գրիչովդ աղւոր
յովեստ մը Սարգիս էֆէնտիին համար:

- Անհոգ եղէք, անհոգ պատասխանեց Տի-
րան խօսքը գրագիրին ուղղելով:

- Կէս սիւնակի չափ փառաւոր բան մը կը
գրենք, աւելցուց անօրէնը հինգ ոսկինները գր-
պանը նետելով:

- Ուրեմն, մնաք բարեւ, ըսաւ գրագիրը և
դուրս ելաւ:

Տնօրէնը անհուն գոհունակութեամբ մը ձեռ-
քերը շփշփեց, զիկառէթ մը վառեց, հառ մըն
ալ Տիրանին տուաւ և զգուակսն ձևով մը ա-
նոր ուսին դարնելով:

- Հայտէ՛, ժամանակ մի՛ կորսնցուներ, սանկ
կոկիկ, աղւոր բան մը գրէ՛ . . . քեզի խահուէ
մը ապսպրե՞մ:

Եւ տնօրէնը յաղթական դուրս ելաւ քթին
տակէն օբէրէթի կտոր մը երգելով:

- Ո՛վ ահռելի կացութիւն, ո՛վ անել զը-
րութիւն, գոչեց Տիրան ինքնիրեն, կեղծ, թատե-
րական շեշտով մը . . . ինզճ՛ Միքէին քն՛չ պա-
տասխան պիտի տանք վաղը իրիկուն, երբ՝ « կամ
յօգուածս կամ երկու ոսկին» պահանջէ ինէ:

Այս մենախօսութենէն վերջ Տիրան գրիչը

առնելով, նստաւ Սարգիս Էֆէտիի ներքոյակա-
նը գրելու:

Գ.

Հետեւեալ առտու կանուխ, երբ Միքէ ար-
թնցաւ դէմքը երանութեամբ կը ճառագայթէր:

Այլաբանական երազ մը տեսած էր որուն
մեկնութիւնը ակնյայտնի կերպով ցոյց կուտար
իր սիրարկածին յաջողութիւնը:

(Շարունակելի)

ՀԱՍՍԾ Է

Երէկ, ուբաթ օր, Ռուսական շոգենաւով
տեղս ժամանեց խոշոր ծրար մը որ Կ. Պոլսէն
մեկնած էր: Այդ խորհրդաւոր ծրարը ուղղուած
էր Տ. Յ. Ղազիկեանի հասցէին և կը պարունա-
կէր 1907 տարւոյ պատի Զարգարեան օրացոյց-
ները, հատը 2 զր. ողջ համեստ արժէքով:

Այս քառարարաւ օրացոյցները, քառաձայն
երգեցողութեան հետ, ապահովարար տարւոյս
ամենէն մեծ նորութիւնը կը կազմեն,

կը շնորհաւորենք Ռուսական շոգենաւը:

New Victoria Hotel ՍԱՆ ՍԹԷՅԱՆՈ

ՆՈՐ ՎԻՔՈՌՈՒԱ ՕՐԹԷԼ Ալեքսանդրիոյ Վօւս
ՅՈՒՆԻՍԻ ՄԷՋ ԲԱՅՈՒԱԾ Հարթ թիւ 2

Առաջին կարգի օթել, մանաւորապէս շինուած, այժմու բոլոր հանդսաւէտութեան պայմաններով, Հիւանալի ճաշարան, սալօն, ծխարան, Մանաւոր ճաշարան, Ընդարձակ պատշգամ և պարտէզ: Ելեքտրական լոյս: ՉԱՒԱՒՈՒ ԳԻՆ: Թեկիֆօն թիւ 370: Հեռադրական հասցէ՝ Նիւ Վիքթորիա, Ռամլէ: Թոամվոյով տաար վայրկեան Ալեքսանդրիայէն:


Ս. Ֆ. ՌէՉԻԿ, ՏՆՕՐԻՆ

Յ. Գ. - Մանաւոր զին կառավարական պաշտօնաւներու և զինուորականներու համար: Բոլոր սենեակները ծովուն զրաց կը նային:

ԱԵԾ ԱԾՄԱՍԱՆՆՅՑ
ΑΛΕΞΑΝΔΡΙΑ
RUE STAMBOUL 15
ALEXANDRIE

Այս ախտանշանն մէջ կը պատրաստուին Գրգռէ և կը կէ գրգռեն: Քառցուէ, Գրգռէ, Պարտալի միջինը, սոճիէ և սոճի մեղրամեղր, զանգուիւր և Քիւրկուրիէ և կարմիրաթիթի վերաբերեալ գրգռեն:
Տարածական ամեն սեռակ գրգռել կայ և ասոր կը գրգռուի: Հարստեան կարմիրաթիթեր, այլու տարտեր, ճամպուզու լիւնը, սառցակրներ, խաչու տարտեր, մանուշակը, կոյնիկ սրտի թեր, գիլգիլ մեծ Մանաւոր Վաւր ճաշար և ճաշարներու: Աստուար զին:
Այս ախտանշանը կը բերուին կը յանձնարարեն: Ելեքտրական, Կահիլի և բոլոր ելեկտրական այլ գիւնը, վառանդելով թէ կը կար յանձնարարութիւնը ամենամեծ խնամքով կը պատրաստուին և գը կը կը ամեն փոփոխութեան կարողանան:
Սառցակրներու զինով ասոր կանչող, անպար զին յայնչի այն ախտանշանը:

«ԱՉՍՏ ԽՕՄԲ» ՉԵՌԻՔԷ
ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ
Ալեքսանդրիա՝ Տ. Յ.
Հալիկեանի քով և Շէրիֆ
Փաշա լրագրաւաճառ Տ.
Թեկլալեանի խանութը:
Գահիրէ՝ լրագրաւաճառ
Տ. Հունիկի և Կօլտընի Բէօշ-
քի քով և «Առասրեր»
Թերթի գրուիլին մօտ:
Նախորդ շարթուան
Թիւերը կը վաճառուին
կրկին զինով:



“ԱՂՍ ԽՕՄԲ ..ի Գայլանները

— ԱՂՍ ԽՕՄԲ - 40 ՀԱՍՏԱՐԱՆՈՒ ԵՐՈՒՅ ՕՔԵՐԸ
Երկրորդ համար բաճկոցից է

40 ՔԻՐԸ	40 ԴՐԸ ԱՂ.Ձ
20 ..	20 ..

Ա Ր Տ Ո Ս Ա Ն Ի Ո Ւ Ն

ԵՐՈՒՅ	40 ՔԻՐ	10 ՏՐԱՐ
ԹՈՒՍ	4 ԲՈՒՄԼԻ
ԱՎԵՐԻՍԸ	2 ՏԱԼԱՐ

Բաճկոցագրությունը կանխիկ

ՀԱՏԸ 1 ԴՐԸ 11,2

— “ԱՂՍ ԽՕՄԲ ..ի համար բաճկոցի կամ
որ և է գրութիան պետք է ուղղել հե-
տևեալ հասցեին”

K. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE, 1 EGYPTE

Մանեգրություններ կրկնուհարյի խառնուրդ
պայմաններով.

Պատասխանատու խոսքեր է. ՕՏԵԱՆ

Տպար. Ժողովրդ. Գ. ԴԱՂԱՎՈՐԻԱՆ. Ալեքսանդրիա